# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**15.10.2024թ.** **ք. Երևան**

2024թ. հոկտեմբերի 15-ին ժամը 11.00-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով /21.06.2014թ., ՀՕ-110-Ն/("Օրենք"), ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի N 1325-Ն որոշման հավելվածով սահմանված կարգով, Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում (հասցե՝ Երևան, Գ. Նժդեհ 26), կայացավ «ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «ԻՆ-ՎԻ» ՍՊԸ-ի էլեկտրահաղորդալարերի և մալուխների արտադրության զարգացում» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 4-րդ հանրային քննարկումը:

Ներկա էին Երևանի քաղաքապետարանի, Շենգավիթ վարչական շրջանի աշխատակազմի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի, նախաձեռնողի և նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակող ընկերության ներկայացուցիչները:

**Ելույթ ունեցավ** «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ Գոհար Մինասյանը՝ մանրամասն ներկայացնելով հանրային քննարկումների առարկան, նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկման իրականացման կարգը՝ համաձայն կառավարության որոշման:

**«ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Շոլյուշնս» ՍՊ ընկերության տնօրեն՝ փորձագետ** Արտակ Տեր-Թորոսյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության իրականացման ընթացքը, տեղեկատվություն տրամադրեց նախատեսվող գործունեության՝ շրջակա միջավայրի բաղադրիչների վրա ազդեցությունների գնահատման արդյունքների և մեղմացնող միջոցառումների վերաբերյալ:

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետի** կողմից հնչեց հարց, որը վերաբերվում էր նախատեսվող գործունեության տարածքի հեռավորությանը մոտակա բնակելի տներից:

Ի պատասխան **Արտակ Տեր-Թորոսյանը** նշեց, որ հեռավորությունը մոտակա տներից կազմում է մոտ 350 մետր, իսկ հարակից մնացած տարածքները արտադրական են:

**Շենգավիթ վ/շ ղեկավարի աշխատակազմի ներկայացուցիչը** նշեց, որ չունի առարկություն և որ պահպանելով 300 մետր հեռավորություն ձեռնարկության ծխնելույզից պահպանվում են ՀՀ-ում գործող սանիտարապաշտպանիչ գոտիների նորմերը:

**Շենգավիթ վ/շ ղեկավարի աշխատակազմի ներկայացուցիչը** հարցրեց Ընկերության դիրքորոշումը օդի աղտոտվածության մակարդակը չափող սարքերի տեղադրման վերաբերյալ:

**ՊՈԱԿ-ի աշխատակցի** կողմից ի լրացում Շենգավիթ վ/շ-ի աշխատակցի, հնչեց հարց թե մթնոլորտային օդի աղտոտվածության ելակետային տվյալները որտեղից են վերցվել: